

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__» _____ 2022թ.

N ____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հավելվածի 20-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ.

«Օրակարգի նախագծում ներառված հարցերը Քաղաքապետի կողմից նշվում են որպես զեկուցվող կամ չզեկուցվող՝ կախված հարցի քննարկման անհրաժեշտությունից:»,

2) հավելվածի 104-րդ կետի 2-րդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ.

«Նիստը վարողի, խմբակցության ղեկավարի առաջարկությամբ և Ավագանու որոշմամբ ընդմիջում կարող է չանցկացվել կամ անցկացվել այլ ժամերին և տևողությամբ, ինչպես նաև կարող է անցկացվել լրացուցիչ ընդմիջում:»,

3) հավելվածի 114-րդ կետում.

ա. 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) քվորումի առկայության դեպքում՝ նիստը վարողը հրապարակում է Ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ օրակարգային չզեկուցվող հարցերը և զեկուցվող հարցերի քննարկման հաջորդականությունը.»,

բ. 4-րդ ենթակետում «օրակարգի» բառից հետո լրացնել «այդ թվում՝ չզեկուցվող հարցերը զեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն կամ զեկուցվող հարցերը չզեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն քննարկելու,» բառերը,

գ. 5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) հերթական նիստի օրակարգի հաստատումից հետո, առանց զեկուցման և սույն կետի 6-12-րդ ենթակետերով սահմանված գործողությունների իրականացման, առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը.»,

դ. լրացնել 5.1-ին և 5.2-րդ ենթակետեր.

«5.1) օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը քվեարկվում են մեկ քվեարկությամբ, ընդ որում՝ Ավագանու անդամի կողմ, դեմ կամ ձեռնպահ

քվեարկությունը համարվում է համապատասխանաբար կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկված յուրաքանչյուր նախագծին:

5.2) Չգեկուցվող հարցերի քվեարկությունից հետո գեկուցվող հարցերը քննարկվում են ըստ օրակարգում դրանց ներկայացման հաջորդականության: Քաղաքապետի պահանջով իր ներկայացրած նախագիծը կարող է քննարկվել արտահերթ: Յուրաքանչյուր հարցի քննարկումը սկսվում է նիստը վարողի կողմից հարցի ներկայացմամբ, ինչպես նաև դրա վերաբերյալ հիմնական և հարակից գեկուցողների անուն-ազգանունների հայտարարմամբ:».

4) հավելվածը լրացնել նոր 117.1.-ին կետով.

«117.1. Ավագանու արտահերթ նիստերի օրակարգում ներառված հարցերը ավագանու որոշմամբ կարող են քննարկվել չգեկուցվող հարցերի սույն կանոնակարգով նախատեսված ընթացակարգին համապատասխան:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նշվում է, որ Երևան քաղաքի ավագանին ընդունում է իր կանոնակարգը: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ավագանու նիստերի գումարման, նիստերում հարցերի քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորումները՝ Երևան քաղաքի ավագանին 2009 թվականի հունիսի 18-ի թիվ 1-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ընդունել է Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը՝ կարգավորելով Երևան քաղաքի ավագանու նիստերի գումարման, նիստերում հարցերի քննարկման կարգը:

Որոշման հավելվածի 3-րդ բաժնով կարգավորված են ավագանու իրավական ակտերի և դրանց ընդունման կարգի հետ կապված հարաբերությունները: Որոշման հավելվածում ամրագրված կարգավորումներով չկա կանոնակարգում այն մասին, որ ավագանու նիստի օրակարգի նախագծում ներառված հարցերը կարող են նշվել, որպես զեկուցվող կամ չզեկուցվող: Հավելվածի 114-րդ կետով կանոնակարգված է ավագանու նիստում հարցերի քննարկման ընթացակարգը, որի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ նշված ընթացակարգը վերաբերվում է միայն զեկուցվող՝ նիստում Հավելվածով սահմանված կարգով քննարկվող և ընդունվող հարցերի քննարկմանը:

Գործնականում, ավագանու նիստի օրակարգում ներառվում են նաև այնպիսի հարցեր, որոնց զեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է: Նկատի ունենալով նշվածը՝ ավագանու նիստի ընթացակարգի, ինչպես նաև ավագանու նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով Նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի թիվ 1-Ն որոշմամբ նախատեսել կարգավորումներ, որոնք ուղղված կլինեն նաև նիստի ընթացքում չզեկուցվող հարցերի քննարկման կարգավորմանը:

Նախագծով նախատեսվում է սահմանել, որ ավագանու նիստի օրակարգում ներառված հարցերը կարող են նշվել որպես զեկուցվող կամ չզեկուցվող՝ կախված հարցի քննարկման անհրաժեշտությունից: Քվորումի առկայության դեպքում՝ նիստը վարողը հրապարակելու է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ օրակարգային չզեկուցվող հարցերը և զեկուցվող հարցերի քննարկման հաջորդականությունը: Ավագանու անդամները, Որոշման հավելվածով սահմանված կարգով հերթական նիստի օրակարգի,

այդ թվում՝ չզեկուցվող հարցերը զեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն քննարկելու, վերաբերյալ կարող են ներկայացնել առաջարկություններ: Օրակարգի հաստատումից հետո, առանց զեկուցման և Որոշման հավելվածի 114-րդ կետի 6-12-րդ ենթակետերով սահմանված գործողությունների իրականացման, առաջնահերթ քվեարկության են դրվելու օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը: Նախագծով նախատեսվում է սահմանել նաև, որ օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը քվեարկվելու են մեկ քվեարակությամբ, ընդ որում՝ ավագանու անդամի կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկությունը համարվելու է համապատասխանաբար կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկված յուրաքանչյուր նախագծին: Նպատակ ունենալով կանոնակարգել ավագանու նիստերի անցկացման կարգը՝ Նախագծով նախատեսվում է փոփոխություն կատարել նաև Որոշման հավելվածի 104-րդ կետում:

Նախագծով առաջարկվող կարգավորումների նպատակն է կանոնակարգել ավագանու նիստում քննարկվող հարցերի ընթացակարգը, նախատեսել կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան՝ կախված հարցի քննարկման անհրաժեշտությունից՝ առանձնացնել այնպիսի հարցերի շրջանակ, որոնք օրակարգում կներառվեն, որպես չզեկուցվող հարցեր, ինչը կարող է նպաստել ավագանու աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ